ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 8-Ն

01 փետրվարի 2019 թվական

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ, ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԼԱՆՋԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ԵՎ<<ՁՈՐԱԿԱՊԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

<<Հայաստանի Հանրապետության պատերազմի, զինված ուժերի,աշխատանքի և իրավապահ մարմինների վետերանների միավորում>>հասարակական կազմակերպության Անի մասնաճյուղին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Լանջիկի միջնակարգ դպրոց>> և <<Ձորակապի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններին կատարել հետևյալ հատկացումները

1.Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4819 (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածից <<100,0>> հազար դրամ հատկացնել <<Հայաստանի Հանրապետության Պատերազմի, Զինված

Ուժերի, Աշխատանքի և Իրավապահ մարմինների վետերանների միավորում>> հասարակական կազմակերպության Անիի մասնաճյուղին:

2. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 (միջնակարգ ընդհանուր կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից <<50,0>> հազար դրամ հատկացնել <<Լանջիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ին՝ պարի խմբակի մասնակցությունը Երևանում կայանալիք մրցույթ-փառատոնին ապահովելու համար:

3. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 (միջնակարգ ընդհանուր կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4637 Զորակապի միջնակարգ դպրոցին՝ ջեռուցման համակարգը նորոգելու համար:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ 9 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ
ԱՐՍԵՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ
ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ
ՆԱՁԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ
ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՈՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ՉԱՎԵՆ
ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«01» փետրվարի 2019 թվական

Քաղաք Մարալիկ